Իսկ այս խնդիրների լուծման և արդյունաբերության զարգացման համար նշված մարզերի բազմակողմանի հնարավորությունների օգտագործումը կարող է իրականանալ առաջին հերթին կառավարության ակտիվ աջակցությամբ: Ըստ որում, մարզերի ռեսուրսային ներուժի ամբողջական օգտագործումը, արդյունաբերության ժամանակակից պահանջներին համապատասխանող ենթաճյուղերի զարգացումը, այդ բնագավառում միջազգային առաջավոր փորձի կիրառումը մեծ ներդրում կլինի ամբողջ հանրապետության տնտեսական զարգացման և միջազգային ինտեգրացման գործում:

ՀՐԱՉԻԿ ՋԱՎԱԴՅԱՆ
ՀՊԱՀ ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ
ՄԵՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գյուղատնտեսության ոլորտում իրականացված տնտեսական բարեփոխումների արդյունքում ի հայտ եկան բազմաթիվ խնդիրներ, որոնք իրենց բացասական ազդեցությունը ունեցան գյուղատնտեսության զարգացման վրա:

Արմավիրի մարզը ևս զերծ չմնաց կառուցվածքային տեղաշարժերի բացասական հետևանքներից: Հոդվածի հիմնական նպատակն է վեր հանել այն խնդիրները, որոնք ներկայումս խոչընդոտում են Արմավիրի մարզի գյուղատնտեսության զարգացմանը, որոնց վերացումը կամ ազդեցության նվազեցումը հնարավորություն կտա ապահովել տնտեսական զարգացման ավելի բարձր տեմպեր և տնտեսական բարձր արդյունավետություն:

ՀՀ Արմավիրի մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության զարգացման համար: Մարզը ներկայումս հանդիսանում է ՀՀ առաջատար մարզերից մեկը, և նշանակալի դեր ունի տնտեսության զարգացման, մասնավորապես, ագրարային ոլորտի զարգացման գործում:

Աղյուսակ 1.

Մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի արժեքի կառուցվածքը (2006թ.)*

Արտադրանքների անվանումը	Արտադրանքի քանակը (տոննա)	Իրացման միջին գինը, տ/ հազ. դրամ	ՀԱԱ-ը (մլն. դրամ)	ՀԱԱ-ի կառուցվածքը (%)
1. Հացահատիկ	36415	85	3095.3	3.7
2. Կարտոֆիլ	47060	120	5647.2	6.8
3. Բանջարեղեն	348852	50	17442.6	20.9
4.Բոստանային մշակաբույսեր	98077	80	7846.2	9.4
5. Բազմամյա խոտ	110737	31	3428.7	4.1
6. Պտուղ	84724	120	10166.9	12.2
7. Խաղող	98839	170	16802.6	20.1
Ընդամենը բուսաբուծություն	×	×	64429.4	77.2
8. Միս	11100	1120	12432.0	14.9
9. Կաթ	40200	120	4824.0	5.8
10. Բուրդ	87	800	69.6	0.1
11. Ձու (մլն հատ)	34,9	50	1745.0	2.1
Ընդամենը անասնաբուծություն	×	×	19070.6	22.8
Ընդամենը գյուղատնտեսություն	×	×	83500.0	100

* Աղյուսակը կազմված է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության Արմավիրի մարզային գործակալության տվյալների հիման վրա

Մարզի գյուղատնտեսության գլխավոր ճյուղը բուսաբուծությունն է: Ըստ 2006թ. տվյալների, մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի 77.2%-ը (64429.4 մլն. դրամ) ստացվել է բուսաբուծությունից: Բուսաբուծական արտադրանքի արժեքի կառուցվածքում գերակշիռ տեղ ունեն բանջարեղենի, խաղողի, պտուղների, բոստանային մշակաբույսերի արտադրությունը, որոնց տեսակարար կշիռը կազմում է համապատասխանաբար 27.1%, 26.1%, 15.8% և 12.2%: Անասնաբուծական արտադրանքներից զգալի տեսակարար կշիռ ունեն մսի արտադրությունը՝ 14.9% կամ անասնաբուծական արտադրանքի 65.2%-ը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ, 2004թվականի համեմատ 2006 թվականին 9.4 %-ով կամ 1178 հեկտարով ավելացել են բազմամյա տնկարկների տարածությունները, որը կատարվել է վարելահողերի (այդ թվում՝ հացահատիկային մշակաբույսերի) կրճատման հաշվին:

Միևնույն ժամանակահատվածում խաղողի այգիների տարածություններն ավելացել են 489 հեկտարով կամ 9.1%-ով, իսկ պտղատու այգիները՝ 689 հեկտարով կամ 9.6%-ով: Բազմամյա տնկարկների տարածությունների ավելացումը հիմնականում պայմանավորված է խաղողի և պտուղների իրացման գների բարձրաց-

մամբ, որն էլ իր հերթին՝ վերամշակող կազմակերպությունների կողմից վերջիններիս նկատմամբ պահանջարկի մեծացմամբ: Փաստորեն բուսաբուծության ճյուղում առավել ցածր ինտենսիվ մշակաբույսերից անցում է կատարվել առավել ինտենսիվ մշակաբույսերի (խաղողի և պտղատու այգիների) մշակությանը:



Գծապատկեր 1. Մարզի բուսաբուծական համախառն արտադրանքի արժեքի կառուցվածքը (2006թ.)

Արմավիրի մարզի ցանքատարածությունների կառուցվածքում վերջին տարիներին 2000-2006թթ. տեղի են ունեցել լուրջ, դրական տեղաշարժեր:

2006թ. 2005թ. համեմատությամբ շուրջ 6000 հեկտարով կամ 33%-ով կրճատվել են հացահատիկային մշակաբույսերի տարածությունները, որի հաշվին շուրջ 1000 հեկտարով կամ 11.8%-ով ավելացել են կերային մշակաբույսերի տարածությունները, շուրջ 1100 հեկտարով կամ 15%-ով՝ բանջարեղենի տարածությունները, ինչպես նաև բազմամյա տնկարկները՝ շուրջ 1300 հեկտարով: Կերային մշակաբույսերի տարածությունների ավելացումը խթան կհանդիսանա անասնապահության զարգացման համար:

Կատարված ուսումնասիրություններից եզրակացվում է, որ 2006թ. մարզում օգտագործվել է վարելահողերի 86.5%-ը, իսկ մարզի 10 համայնքների տվյալներով կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ միջին հաշվով չի մշակվում վարելահողերի 13.2%-ը:

Գյուղատնտեսությունում, տնտեսական վերափոխումների արդյունքում, շուկայական հարաբերությունների ձևավորումը ինչպես ամբողջ Հայաստանում այնպես էլ Արմավիրի մարզում ի հայտ բերեց մի շարք խնդիրներ, որոնց մեջ առանձնակի կարևորվում են տեխնիկական միջոցներով ապահովվածությունն ու դրանց արդյունավետ օգտագործումը:

Մարզի գյուղատնտեսությունն այսօր առավելապես տուժում է նյութատեխնիկական միջոցների անբավարարությունից:

Մարզում առկա է պարարտանյութերի, թունաքիմիկատների խիստ պակաս: Լուրջ խնդիրներ են առաջացել գյուղատնտեսության տեխնիկական ապահովման բնագավառում: Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների գերակշիռ մասի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր է դրանց սարքինության մակարդակը (2006թ. Արմավիրի մարզում, ըստ գյուղ. տեխնիկայի տեսակների, տատանվել է 75.0-95.8%-ի սահմաններում) և արտադրողականությունը, հետևաբար բարձր են շահագործման ծախսերը և ծառայությունների սակագները:

Ներկայումս հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի խիստ պակասը, դրանց զգալի մասի անսարք լինելը, մեքենայական աշխատանքների չափազանց բարձր, ոչ մի կերպ չվերահսկվող և տնտեսապես չհիմնավորված սակագները հանգեցրել են նրան, որ նույնիսկ Արարատյան հարթավայրի, այդ թվում՝ Արմավիրի մարզի գյուղացիական տնտեսություններում աշխատանքների զգալի մասը կատարվում են ձեռքով: Եթե դրան ավելացնենք նաև մեքենավարների ցածր որակավորումը, ապա պարզ կդառնան գյուղատնտեսական մեքենայացված աշխատանքների կատարման արդյունավետության ցածր լինելու պատճառները:

Տեխնիկայի ապապետականացման գործընթացում նախապատվությունը տրվեց մինչ այդ տեխնիկան չշահագործող մեխանիզատորին: Կասկածից դուրս է, որ նման մոտեցումը ժողովրդավարական է, սակայն ձեռք բերելով գյուղատնտեսական տեխնիկան (ի դեպ, չնչին գներով) սեփականատերը դարձավ իր տեխնիկայի լիիրավ տերը, մի իրավիճակ, որը, բնական լինելով հանդերձ, հետագայում մեծ դժվարություններ առաջացրեց գյուղատնտեսական աշխատանքների մեքենայական սպասարկումների կազմակերպման գործում: Բանը նրանում է, որ սեփականատերը առաջին հերթին սպասարկում է իր արտադրությունը (դա բնական է), իսկ ուրիշներին ծառայություններ մատուցելու դեպքում սահմանում է աշխատանքների կատարման այնպիսի սակագներ, որոնք մեծ մասամբ հիմնավորված չեն ու ընդհանրապես բարձր են, և որի հետևանքով հիմնականում գյուղացիական տնտեսությունները խուսափում են մեքենայական ծառայություններից: Բազմաթիվ գյուղացիական տնտեսություններում, կապված բարձր գների հետ, չեն օգտագործվում հերբիցիդներ, բույսերի պաշտպանության քիմիական միջոցներ ինչի արդյունքում մեծացել է վնասատուներով և հիվանդություններով վարակվածության աստիճանը, իջել է բերքատվությունը: Այսօր գյուղում, հատկապես մասնավոր հատվածում,

գյուղատնտեսական մեքենաների տեխնիկական սպասարկումների և նորոգումների գծով կատարվող աշխատանքները, բավարար չեն և բարելավման կարիք ունեն:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, Արմավիրի մարզում 2006 թվականի հունվարի 1 դրությամբ, գյուղատնտեսական տրակտորային հավաքակազմը ընդգրկում է 1725, իսկ բեռնատար ավտոմեքենաներինը՝ 1227 միավոր: Վերջիններիս թվաքանակը, համեմատած 1990 թվականի հետ, նվազել է համապատասխանաբար՝ 16 և 9.5%-ով: Որոշակի կրճատվել է հացահատիկահավաք կոմբայնների հավաքակազմը՝ 33% և ներկայումս կազմում է 97միավոր:

Մարզի տեխնիկական միջոցների դինամիկան ներկայացնենք գծապատկեր 1-ի միջոցով:



Գծանկար 2. Արմավիրի մարզի տեխնիկական միջոցների դինամիկան

Տրակտորների և բեռնատար ավտոմեքենաների թվաքանակի ավելացումը մարզում հիմնականում պայմանավորված է տնտեսության մյուս ճյուղերի տվյալ տեսակի տեխնիկական միջոցները գյուղատնտեսությունում օգտագործելու հանգամանքով: Կերհավաք կոմբայնների թվի կրճատումը հիմնականում հետևանք է կերային մշակաբույսերի տարածքների կտրուկ կրճատման: Ըստ ՀՀ վիճակագրական ազգային ծառայության տվյալների զգալիորեն ցածր է տեխնիկական միջոցների սարքինության մակարդակը, այն տատանվում է 66-85%-ի սահմաններում, որը պայմանավորված է ինչպես հավաքակազմի ծառայության մեծ ժամկետով, այնպես էլ տեխնիկական միջոցների պահպանության, տեխնիկական սպասարկումների և նորոգումների կազմակերպման անբավարար վիճակով: Այն կարգավորվում է տարերային ձևով, կամ երբեմն այդ միջոցառումները չեն իրականացվում համապատասխան ռեսուրսների բացակայության պատճառով:

Մարզում առկա տեխնիկական հավաքակազմի գերակշռող մասն ունի 20 տարուց ավելի ծառայության ժամկետ, տեխնիկական միջոցները մաշված են ինչպես ֆիզիկապես այնպես էլ բարոյապես: Վերջինիս արդյունքը շահագործման բարձր ծախսերն են և տեխնիկայի օգտագործման ցածր արդյունավետությունը:

Տեխնիկական հավաքակազմի նորացումը իրականացվում է չափազանց դանդաղ տեմպերով, այն հիմնականում կատարվել է ճապոնական և չինական դրամաշնորհների հաշվին՝ հանրապետություն ներկրված տրակտորներով և հացահատիկահավաք կոմբայններով: Նշված դրամաշնորհների հաշվին, ընդհանուր առմամբ, հանրապետություն են ներկրված 351 փոքր հզորության տրակտորներ՝ իրենց գյուղատնտեսական գործիքներով, և 53 հացահատիկահավաք կոմբայն: Վերջիններս, իհարկե, որոշ դրական ազդեցություն ունեցան մեքենայական հավաքակազմի նորացման և մի շարք գյուղացիական տնտեսություններում արտադրական գործընթացների մեքենայացման մակարդակի բարձրացման վրա:

Գյուղացիական տնտեսությունների և առևտրային կազմակերպությունների տեխնիկական միջոցներով ապահովվածության տվյալներից ակնհայտ է դառնում, որ գյուղացիական տնտեսությունների տեխնիկական միջոցներով ապահովվածությունը չափազանց ցածր է: Այսպես, 100 տնտեսության հաշվով տրակտորների ապահովվածությունը կազմում է 3.4, իսկ բեռնատար ավտոմեքենաներինը՝ 2.4: Մնացած տեխնիկական միջոցներով ապահովվածությունը առավել ցածր է: Առկա իրավիճակը զգալի բարդություններ է առաջացնում մեքենայացված աշխատանքներով սպասարկումներ կատարելիս:

Հողերի սեփականաշնորհման արդյունքում ձևավորված մասնատված հողամասերը խոչընդոտում են ոչ միայն հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, այլ նաև արդյունավետ գյուղատնտեսական արտադրության կազմակերպմանը:

Եթե հաշվի առնենք, որ մեկ գյուղացիական տնտեսության սեփականաշնորհված գյուղատնտեսական հողատեսքերը տեղաբաշխված են մեկը մյուսից մեծ հեռավորության վրա, երբեմն ցաք ու ցրիվ, որ յուրաքանչյուր սեփականատեր իր հողատարածքում աճեցնում է իր ցանկացած մշակաբույսը (երբեմն չպահպանելով ցանքաշրջանառության ամենատարրական պահանջները), որ հարևան հողակտորից մեկում բուժում է կատարվում, իսկ մյուսում՝ ոչ, մեկ մշակաբույսը ջրում է պահանջում, մյուսը ոչ, որ որոշ տրակտորային ագրեգատների համար չկան շրջադարձային գոտիներ և այլն, ապա պարզ կդառնա, որ մեքենաօգտագործման համար ստեղծվել են բավականին անբարենպաստ պայմաններ, հետևաբար այդ պայմաններում օգտա-

գործվող գյուղատնտեսական տեխնիկան չի կարող ապահովել բարձր տնտեսական արդյունավետություն:

Վերջին տարիներին համաշխարհային տնտեսության մեջ, որպես երկարաժամկետ վարկավորման այլընտրանք, հաճախ է կիրառվում վարձակալությունը (լիզինգ): Ներկայումս այն համաշխարհային արժեքավորում է ստացել, և դժվար է պատկերացնել մի զարգացած պետություն, որտեղ այդ գործառույթները չեն կիրառվում:

ՀՀ-ում ներկայումս լիարժեք գործում է վարձակալական (լիզինգային) երկու կազմակերպություն՝ «Ագրոլիզինգ» և «Ակբալիզինգ»:

ՀՀ առևտրային բանկերը հավելյալ եկամուտ ստանալու համար հազվադեպ են դիմել, որպես երկարաժամկետ վարկավորման գործիք, ֆինանսական վարձակալման օգնությանը: Դա հիմնականում բացատրվում է այն բանով, որ տվյալ գործարքից ստացվելիք եկամուտը, սկսած 2001 ֆինանսական տարվանից, հարկվում է ավելացված արժեքի հարկով: Ներկայումս, երբ այդ արտոնությունը վերականգնվել է, վարձակալության կիրառումը հաճախակի կդառնա, սակայն դրա ոլորտային ուղղվածության կարգավորումը ՀՀ կառավարության խնդիրն է:

Անդրադառնալով աշխատանքային ռեսուրսներին, նշենք, որ մարզը բնակչության թվաքանակով հանրապետությունում գրավում է երրորդ տեղը և 2006թ. տվյալներով ունի 280.2 հազ. բնակիչ, որից գյուղական բնակչությունը՝ 180.6 հազար մարդ:

Աղյուսակ 2.

Արմավիրի մարզի աշխատանքային ռեսուրսները

Ցուցանիշներ	Չափի միավորը	2004թ.	2005թ.	2006թ.
1.Բնակչության թվաքանակը	հազ. մարդ	278.2	279.2	280.2
2.Զբաղվածներ	հազ. մարդ	116.9	121.9	121.4
3.Գյուղացիական տնտեսութ. զբաղվածները	հազ. մարդ	86.3	89.2	88.4
4.Գործազրկության մակարդակը	%	4.3	3.2	2.4
5. Միջին անվանական աշխատավարձը	դրամ	36.865	50.999	59.007

Աղյուսակ 2-ի տվյալների վերլուծությունից եզրահանգում ենք, որ մարզում 2004 թվականին գյուղացիական տնտեսությունում զբաղվողների թիվը կազմել է ընդհանուր զբաղվածների թվի 73.8%-ը, իսկ 2006 թվականին այն կազմել է 72.8%, այսինք կարող ենք եզրակացնել, որ տեղի է ունենում բնակչության հոսք դեպի քաղաք, որն էլ բերել է գյուղացիական տնտեսությունների զբաղվողների թվի որոշակի կրճատման: Սակայն մարզում գործազրկության մակարդակը չի ավելացել այլ այն նախորդ տարվա համեմատ կրճատվել է 0.8%-ով: Ավելացել է նաև միջին ամսական աշխատավարձը 2004 թվականին 2006թվականի նկատմամբ 62.5 %-ով:

Մարզի գյուղացիական տնտեսություններում արտադրությամբ անմիջապես զբաղվածների թիվը կազմում է 85-90%, այդ թվում, մշտական աշխատողները՝ 70-75 %, սեզոնային և ժամանակավոր աշխատողները՝ 5-8%, ղեկավար կազմը և մասնագետները՝ 8-12%: Տվյալ կառուցվածքը կախված է բազմաթիվ գործոններից, ինչպիսին են. ձեռնարկության հզորությունը և մասնագիտացումը, ինտեգրման գործընթացներում ընդգրկվածության աստիճանը, բնական պայմանները և այլն: Աշխատանքային ռեսուրսները կարելի է տարաբաժանել նաև այլ ցուցանիշներով, օրինակ, ըստ հասակի, սեռի, կրթական մակարդակի, որակավորման, աշխատանքային ստաժի և այլն:

Տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման, ինչպես նաև աշխատանքի ճիշտ կազմակերպման շնորհիվ հնարավոր է բարձրացնել մշակաբույսերի բերքատվությունը և անասունների մթերատվությունը, բարձրացնել աշխատողների աշխատանքային ակտիվությունը և աշխատանքի ինտենսիվությունը ի հաշիվ դրանց որակավորման բարձրացման, հետևաբար կրճատել միավոր արտադրանքի վրա կատարված աշխատանքային ծախսումները: Սակայն ներկայիս պայմաններում ինչպես ցույց է տալիս վերլուծությունը շատ գործոններ չեն կատարվում ամբողջ ծավալով, որը խոչընդոտում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Կարելի է փաստորեն ասել, որ հողի և արտադրության միջոցների սեփականաշնորհումից հետո գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականությունը զգալիորեն նվազել է, սակայն վերջին տարիներին նկատվում է աճի միտումներ:

2006 թվականին Արմավիրի մարզի 1 գյուղացիական տնտեսությունում զբաղվածների հաշվով ստացվել է 94.457 դրամի համախառն արտադրանք, որը համեմատած 1992-ական թվականների արձանագրած ցուցանիշի ավելացել է, սակայն դեռևս այդ ցուցանիշի աճի հնարավորություններ կան, որոնք հիմնականում պայմանավորված են աշխատանքների ճիշտ և արդյունավետ ձևով կազմակերպմամբ: Արմավիրի մարզում աշխատանքի արտադրողականության աճ ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել գիտատեխնիկական առաջընթացի այն ուղղությունները, որոնք նպաստում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և անասունների մթերատվության բարձրացմանը: Դրանք առաջին հերթին այնպիսի գործոններ են, ինչպիսիք են քիմիացումը, ագրոտեխնիկայի օգտագործման մակարդակի բարձրացումը, բարձր բերքատու սորտերի և բարձր մթերատու անասունների օգտագործումը, ֆոնդաապահովվածության և ֆոնդազինվածության մակարդակի բարձրացումը: Աշխատանքի արտադրողականության նվազման գլխավոր պատճառներից մեկը, հանդիսանում է հողերի փոքր չափերը, դրանց կտրտվածությունը, մեքենայացման ցածր մակարդակը,բերքատվության ցածր մակարդակը (որը հիմնականում արդյունք է հանքային և օրգանական պարարտանյութերի օգտագործման ծավալների կրճատման):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմավիրի մարզը 2006թ. արտադրել է հանրապետության ամբողջ համախառն արտադրանքի 15%-ը և հանդիսանում է հանրապետության առաջավոր մարզը, անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն և միջոցներ ներդնել, մարզի հնարավորություններն առավել լրիվ և արդյունավետ օգտագործելու համար: Անհրաժեշտ են մեծաքանակ ներդրումներ գյուղատնտեսության նյութատեխնիկական

բազայի նորացման համար, քանի որ անհնար է ապահովել աշխատանքի արտադրողականության աճ առանց ժամանակակից ռեսուրսախնայողական տեխնոլոգիայի ներդրման: Գյուղատնտեսությունում աշխատանքի արտադրողականության կայուն աճ ապահովելու համար անհրաժեշտ է իրականացնել համալիր միջոցառումներ ուղղված բերքատվության բարձրացմանը, նոր բարձր արտադրողական, ունիվերսալ տեխնիկայի ներդրմանը, պետության աջակցության ծավալների մեծացմանը, գյուղատնտեսությունում զբաղվող աշխատողների շահագրգռվածության բարձրացմանը, արտադրվող գյուղատնտեսական մթերքների իրացման խթանմանը:

Մարզում առկա է որոշակի խնդիրներ կապված արտադրվող գյուղատնտեսական մթերքների իրացման հետ: Վերամշակողող կազմակերպությունները մթերում են սահմանափակ քանակությամբ մթերք, հետևաբար գյուղացին լուրջ խնդիրներ է ունենում արտադրանքի իրացման հետ կապված:

ՏԻԳՐԱՆ ԵՐԱՆՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՇՈՒԿԱՅԻ ՈՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շուկայական հարաբերությունների տնտեսական կարգավորման գործընթացը ուսումնասիրելիս անհրաժեշտ է հստակ սահմանազատել պետության տնտեսական դերը ազատ շուկայի և կարգավորվող շուկայական տնտեսության պայմաններում: Տնտեսագիտության մեջ ազատ շուկան բնութագրվում է հետևյալ չափանիշներով՝

- մրցակցության մասնակիցների անսահմանափակ թիվ, ազատ մուտք շուկա և նրանից ազատ դուրս գալու հնարավորություն, ազատ շուկային համապատասխանում է սեփականության ցանկացած տեսակ: Ազատ մրցակցության համակարգը բացառում է սպառողների ցանկացած տեսակի խտրականություն,
- նյութական, աշխատանքային, ֆինանսական և այլ ռեսուրսների բացարձակ շարժունակություն,
- մրցակցության բոլոր մասնակիցներին արտադրանքի և ծառայությունների առաջարկի, գների վերաբերյալ շուկայական տեղեկատվության ամբողջական ծավալի տրամադրում,
- միասեռ ապրանքների բացարձակ նույնանույնություն, ապրանքի ապրանքային մակնիշի և ապրանքի որակի բնութագրման անհատական բնութագրիչներ,
- ազատ մրցակցության մասնակիցները ազդեցություն չպետք է ունենան այլ ձեռնարկատերերի ընդունած որոշումների վրա:

Այսպիսով, ազատ շուկայի համակարգում պետք է բացակայի մոնոպոլիան, ինչպես նաև բացառվի արժեզրկումը, գործազրկությունը և գերարտադրությունը: Սակայն դրա հետ մեկտեղ ազատ շուկան ի վիճակի չէ երաշխավորել հասարակության բոլոր սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումը: Այստեղ հատուկ նշանակություն ունի պետության տնտեսական դերը շուկայական հարաբերությունների կարգավորման գործում:

Պետության տնտեսական միջամտությունը պահանջվում է այնպիսի խնդիրների լուծման դեպքում, որոնք ենթակա չեն շուկայական մեխանիզմների կարգավորման: Դրանցից հիմնականները հետևյալն են.

- արտաքին ազդեցությունների պետական կարգավորումը: Այդ առաջին հերթին վերաբերում է շրջակա միջավայրի պաշտպանությանը, հողի բերրիության բարելավմանը, մելիորատիվ միջոցառումների իրականացմանը, հողատարման երևույթների կանխմանը և այլն,
- հասարակական սպառման ապրանքների պահանջարկի պետական կարգավորումը: Ազատ շուկան հնարավորություն է տալիս բավարարել միայն այն պահանջմունքները, որոնք արտահայտվում են պահանջարկի միջոցով: Սակայն գոյություն ունեն այնպիսի ապրանքներ ու ծառայություններ, որոնց սպառմանը մասնակցում են հանրապետության ամբողջ բնակչությունը: Առաջին հերթին դա վերաբերում է հասարակական կարգի պահպանությանը, ազգային պաշտպանությանը, պետական կառավարմանը, միասնական էներգետիկ համակարգի կենսագործունեությանը, կոմունիկացիաների համակարգին և այլն,
- պետության կողմից երկրի տնտեսության համար անհրաժեշտ դրամի զանգվածի ապահովումը: Շուկան ունակ չէ լուծել նշված կարևոր հիմնախնդիրը:

Պետության տնտեսական գործունեության գլխավոր նշանակությունը կայանում է շուկայի այն գործառույթների լրացումը, որոնք շուկան ի վիճակի չէ արդյունավետ իրականացնել: Շուկան չի երաշխավորում աշխատանքի իրավունքի պահպանումը: Շուկայական տնտեսությունում տեղ ունի գործազրկությունը: Պետությունը պետք է կարգավորի աշխատուժի շուկան՝ նպատակ ունենալով բնակչության լիարժեք զբաղվածության ապահովումը:

«Շուկան չի կարող ապահովել երկրի բոլոր ճյուղերում նյութատեխնիկական առաջընթացի արագացումը, հատկապես հիմնարար գիտությունների և տեխնիկայի զարգացումը, որոնք պահանջում են խոշոր ներդրումներ: Շուկայական տնտեսությունը կարիք ունի պետության կողմից հակասղաճային և հակամենաշնորհային քաղաքականության»[1]:

Ագրարային շուկայի տնտեսական կարգավորումը հիմնվում է պետական հովանավորչության վրա, որը նախատեսում է ընդլայնված վերարտադրության սուբսիդավորում, հարկային և վարկային խթանման միջոցառումներ:

---

[1] Коваленко Н.Я. Экономика сельского хозяйства. С основами аграрных рынков. Курс лекций.-М.: Ассоциация авторов и издателей. ТАНДЕМ: Издательство ЭКМОС, 1998. с.104.